Տիգրան Մեծը՝ պետականության խորհրդանիշ

«Որովհետեւ սա մեր թագավորներից ամենահզորն ու ամենախոհեմն էր եւ նրանց բոլորից քաջ: «...» բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ. իսկ հետո եկողներիս ցանկալի թե՛ ինքը եւ թե՛ իր ժամանակը: Նա ամեն բանի մեջ արդարադաս եւ հավասարասեր կՀեռ ունենալով՝ ամեն մեկի կյանքը կՀռում էր իր մտքի լծակով, չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»:

Մովսես ԽՈՐԵՆԱՑԻ

Պետականության կերտման ճանապարհին միշտ չէ, որ խոհեմություն ենք ունենում ետ նայել եւ ուշադրության արժանացնել երբեմնի ունեցած մեր հզոր պետականությունը եւ այն թագավորներին, ովքեր նպաստել են այդ պետականության կայացմանն ու հզորացմանը: Պատմաբաններն անգամ խոստովանում են, որ պատմության բազմաթիվ հատորներում նման հարցերը կարծես երկրորդ պլան են մղված: Ու թեեւ պատմության անիվը պտտեցնողը համարվում է ժողովուրդը, սակայն լինում են անհատներ, որոնց ազդեցությունն այդ անիվի պտույտների վրա անհնար է ուրանալ: Հենց այդպիսի անհատ է հայոց Տիգրան Մեծ թագավորը, միակը, որին արքայից արքա տիտղոսն է շնորհվել:

2005 թվականին լրանում է Մեծն Տիգրան Երկրորդի գահակալության 2100 եւ ծննդյան 2145 ամյակները: Եվ այն, որ այսօր այդ տարեդարձերը նշվում են երկօրյա գիտաժողովով, Հայաստան երկրի՝ անկախ պետություն լինելու եւ հայ ժողովրդի՝ նոր հոգեբանություն ու նոր դիմագիծ ունենալու արդյունքն է: Գիտաժողովը, որը երեկ իր աշխատանքը սկսեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում, իսկ այսօր շարունակվում է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատանը, թերեւս առաջին անգամ փորձ է անում գնահատել Տիգրան Մեծի տեղն ու դերը իր ժամանակի հոլովույթում, ընդգծել նրա ազդեցությունը ոչ միայն հայկական, այլեւ եվրոպական քաղաքակրթության ձեւավորման վրա եւ, անշուշտ, հիշեցնել, որ այդպիսի հզոր պետականություն ունեցող ազգը պարտավոր է աշխարհին ներկայանալ ոչ թե իր խեղճությամբ ու ողբերգություններով, այլեւ պատմության այն էջերով, որոնք ցանկացած ազգի հպարտությունը կարող էին լինել:

Գիտաժողովի մասնակիցները Տիգրան Մեծին եւ նրա ժամանակաշրջանը բնութագրելիս շռայլ էին եւ արդարացի: **Վահան Հովհաննիսյանի** խոսքով՝ նա մեկն էր, որը *«պետության մեջ ժողովրդին դարձրեց ազգ, եւ այդ ազգը 500 տարի գոյատեւեց նրա տված իմաստությամբ»*:

Հայկ Հակոբյանը (ԵՊՀ, ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ) ընդգծեց Տիգրան Մեծի դերը հայ ժողովրդի՝ որպես համաշխարհային ազգի ճանաչելի դարձնելու առումով, Հայաստանի քաղաքների եւ գյուղերի զարգացման գործում, ներկայացրեց նրան որպես *«սեփական որոշումներ կայացնող եւ դրանց համար պատասխանատվություն կրող»* արքա եւ որպես մշակութային կերպար, որը զարկ տվեց արվեստների զարգացմանն ու հանդես եկավ իբրեւ լուսավորիչ:

«Երկիրը պատրաստ էր թռիչքի, եւ Տիգրան Մեծը այդ թռիչքն առաջնորդող էր»,–իր կարծիքն է արտահայտում **Բաբկեն Հարությունյանը** (ԵՊՀ), որն արքայից արքայի մեծագույն արժանիքը համարում է այն, որ վերջինս ստեղծեց կուռ ու համախումբ մի ժողովուրդ, այն դեպքում, երբ այդ շրջանում բազմաթիվ այլ ժողովուրդներ պարզապես հեռացան պատմության թատերաբեմից:

Նիկոլայ Հովհաննիսյանը (ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտ), ուսումնասիրելով արաբական պատմագրությունը, նկատել է, որ վերջին շրջանում արաբ պատմաբանների կողմից մեծ հետաքրքրություն է նկատվում Հայաստանի եւ հայոց պատմության հանդեպ: Տիգրան Մեծի դարաշրջանի մասին խոսելիս՝ արաբ պատմաբանները նրա ղեկավարած պետությունը համարում են կայունություն, ինչը մինչեւ օրս զգուշանում են անել հայ պատմաբանները, իսկ Տիգրանին ոչ միայն արքայից արքա են կոչում, այլեւ համայն Ասիայի թագավոր:

«Չկա ավելի մեծ արժեք, քան պետականությունը, իսկ Տիգրան Մեծը մեր պետականության ամենամեծ խորհրդանիշն է»,–ասում է **Հենրիկ Հովհաննիսյանը** (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ), որն ուսումնասիրության նյութ է դարձրել հելլենիստական թատրոնը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում: Թատրոնը համարելով քաղաքակրթության բարոմետր՝ արվեստաբանը համոզված է, որ հելլենիստական մշակութային ավանդությունը մեզանում սկսվել է Տիգրանից առաջ, զարգացել նրա օրոք եւ հետագայում շարունակվելով՝ հիմք ստեղծել հունաբանության համար վաղ միջնադարում: Ամենակարեւոր եզրակացությունը հետեւյալն է. եթե եվրոպական քաղաքակրթությունը անտիկ Հունաստանի քաղաքակրթության հենքի վրա է ձեւավորվել, իսկ Հայաստանը մեծապես առնչվել է դրան, ուրեմն՝ մենք մասնակիցն ենք եվրոպական քաղաքակրթության ձեւավորման:

Գիտաժողովի առաջին օրվա լիագումար նիստերին Տիգրան Մեծի գործին ու պատմական նշանակությանն անդրադարձան նաեւ մի խումբ այլ ուսումնասիրողներ: Իսկ այսօր Օշականում գիտաժողովը կշարունակվի երեք մասնաճյուղերում՝ «Տիգրան Մեծը որպես քաղաքական գործիչ», «Տիգրանյան Հայաստան. երկիրը եւ ժամանակը», «Տիգրան Մեծը հայ եւ համաշխարհային մշակույթում»: Կլսվեն շուրջ երեք տասնյակ զեկուցումներ, սակայն արքայից արքայի մասին ասելիքը չի սպառվի: Նրա անձը, պետականություն կերտողի կերպարը եւ գործունեությունը չուսումնասիրված դեռ բազում ծալքեր ունի:

Գիտաժողովը կազմակերպել են Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան, համազգային հայ կրթական եւ մշակութային միությունը եւ Հայ առաքելական եկեղեցու Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը:

ԱՆՈՒՇ ՍԱՄՎԵԼՅԱՆ